



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ**

**Հ Ր Ա Մ Ա Ն Ը**


*03* «*Օգոստոսի*» 2018 թվականի № *101* - Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմնի աշխատակազմում պայմանագրերի մշակման, ստորագրման, հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին» թիվ 1505-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ կետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Սահմանել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն) պայմանագրերի հաշվառման գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել նախարարությունում պայմանագրերի հաշվառման գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Նախարարության իրավաբանական վարչության պետին՝ ապահովել պայմանագրերի հաշվառման գրանցամատյանի վարման աշխատանքների իրականացումը:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել գլխավոր քարտուղարին:



**ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՁեՎ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ  
 ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
 ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐՔԻ**

ՀՀ	Պայմանագրի կնքման ա.ա.տ.	Պայմանագրի անվանումը	Պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի տվյալները	Պայմանագրի առարկան	Պայմանագրի ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետը	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ  
 ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
 ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐՔԻ ՎԱՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են նախարարությունում պայմանագրերի հաշվառման և գրանցման գրքի վարման հետ կապված հարաբերությունները:

2. Պայմանագրերի հաշվառումը և գրանցումն իրականացվում են հաշվառման և գրանցման գրքում համապատասխան գրառում կատարելու միջոցով:

3. Հաշվառման և գրանցման գիրքն ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում նշվում է պայմանագրի հաշվառման համարը, որը յուրաքանչյուր տարի սկսվում է հունվարի 1-ից և շարունակվում մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ կնքված պայմանագրերի համար:

Նախարարության՝ հաշվառման և գրանցման գիրքը վարող համապատասխան ստորաբաժանումը կարող է սույն կարգով գրառված պայմանագրի գրանցման յուրաքանչյուր համարի ցանկացած կողմից որոշակի սկզբունքով լրացնել տարբերակող տառեր կամ թվեր՝ դրանք առանձնացնելով գծիկներով.

2) 2-րդ սյունակում պայմանագրի կնքման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.

3) 3-րդ սյունակում նշվում է պայմանագրի անվանումը.

4) 4-րդ սյունակում նշվում են պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի տվյալները, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպատիրավական ձևը և գործունեության իրականացման վայրը.

5) 5-րդ սյունակում նշվում է պայմանագրի առարկան.

6) 6-րդ սյունակում նշվում են պայմանագրի ուժի մեջ մտնելու և պայմանագրի գործողության ժամկետը լրանալու ամսաթիվը, ամիսը և տարեթիվը.

7) 7-րդ սյունակում նշվում են հաշվառման գրքի մյուս սյունակների գրանցումները բացահայտելու կամ լրացնելու համար անհրաժեշտ գրառումներ և տեղեկություններ, ինչպես նաև պայմանագրի պայմանները փոփոխելու, պայմանագիրը դադարեցնելու և այլնի վերաբերյալ տեղեկություններ: